ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ,ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ,ՏՆՏԵՍԱԿԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք,
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գեղակերտ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 25

24 հունիսի 2025 թվական

Տեղի ունեցավ Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովի N 07 նիստը: Նիստին ներկա էին հանձնաժողովի նախագահ Լիլիթ Ենգիբարյանը, անդամներ՝ Աննա Գևորգյանը, Իրինա Սիրունյանը և Հրայր Ասատրյանը :

Հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինասատնտեսագիտական և գնումների բաժնի պետի կողմից ներկայացված «**Գումար հատկացնելու մասին**» նախագիծը՝ Խոյ համայնքի 2025 թվականի հունիսի 25-ի ավագանու հերթական նիստում :

Նիստում քննարկվեց.

1. Խոյ համայնքի Այգեշատ գյուղի բնակիչ, զինակոչիկ՝ Վազգեն Սամվելի Թովմասյանին «Իքս Դրայվ» ՍՊԸ երթևեկության տրանսպորտային ծախսերը փոխհատուցելու համար գումար հատկացնելու մասին:
2. Աղավնատուն բնակավայրում կազմակերպվող «Վ.Ավագյանի» անվան ֆուտբոլային մրցաշարի համար գումար հատկացնելու մասին:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային, տնտեսական, գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացությունը՝

1. Տալ համաձայնություն՝

1.Խոյ համայնքի Այգեշատ գյուղի բնակիչ, զինակոչիկ՝ Վազգեն Սամվելի Թովմասյանին «Իքս Դրայվ» ՍՊԸ երթևեկության տրանսպորտային ծախսերը փոխհատուցելու համար հատկացնել 28000/ քսանութ հազար / ՀՀ դրամ գումար:

2.Աղավնատուն բնակավայրում կազմակերպվող «Վ.Ավագյանի» անվան ֆուտբոլային մրցաշարի համար տրամադրել 87000 /ութսունյոթ հազար/ ՀՀ դրամ գումար ՝ փոխանցելով «ՍԻՍ-ԿԻԼԻԿԻԱ» ֆուտբոլային ակումբի բանկային հաշվեհամարին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝	ԷԻԼԻԹ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝	ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝	ԻՐԻՆԱ ՍԻՐՈՒՆՅԱՆ
	ՀՐԱՅՐ ԱՍԱՏՐՅԱՆ